

Հիմնադիրն Հայկազեան Հեմարանի եւ մի շարքեացի մկնչեւ փառաւորապէս զառաջս ունիցի ամենայն ակնունելի արդելանաց: Այսուհետեւ թող փայլեցի ծիածանն Արարատեան ի նշան բարւոյ, եւ աղանկն Նոյեան տապանի շիւղ ի բերան թռուցեալ յարեւելից յարեւմուտս քարոզեցէ ջախջախել զգրուի վիշապին տղիտութեան: Ես չեմ կարող մի առ մի բացատրել՝ ո՞վ բազմականք, զսկսեալ եւ զեռ եւս զսկսանելի սիրազործութիւնս Վեհափառ Հօրն մերոյ, այլ թողում պատմաբանից՝ իւր ժամանակին ապա, «**ԿԵՅԳԷ ԿԵՅԳԷ**» դրօշմել զանուն եւ զմեծագործութիւնս նորա, որ ջանայ զոհել զանձն իւր վասն բարեկարգութեան եւ բարոյական փրկութեան Հայկական ազգիս:

Ի վերջոյ դարձուցեալ զերեսս իմ յԱթոռ ամենաբարձրելոյն Աստուծոյ թափօրական մաղթանօք համախմբեալ զասիւրք միաբան քահանայիցս ընդ շքանշան պաշտօնաւորացոյ, մեծարու քաղաքացւոցոյ, արհեստապետ եւ արհեստաւոր ժողովրդականացոյ, ընդ աւագ եւ կրտսեր վարժապետացոյ հանդերձ աշակերտօքս եւ աշակերտութեօքս վերառաքեալ զճերմագին պաղատանս յաթոռ յաւիտենականին Աստուծոյ կնքեմ զբանս ասելով «**Թագաւոր երկնաւոր, հաստատեան զաթոռ ինքնակալ Կայսեր մերոյ Աղէքսանդրի Բ. պահպանեան Տէր զհայրախնամ փոխարքայն մեր մեծ Իշխան Միխայել Նիկողայելի, օրհնեան տէր եւ զամենեւեանս, որք ածնեցաք ի մէջ տաճարիս հանդէս տասնամեայ Օծութեան Նորին Վեհափառութեան:**

Միաբան ասացո՞ւք ի միասին՝ «**Կեցցէ Վեհափառ Կաթողիկոսն մեր երկար կենօք վասն կատարելագործելոյ զսկսեալ ազգաշահ գործս իւր, հաստատուն պահել զՄայր Աթոռն մեր Ս. Էջմիածին, եւ առ ի մի յօդ զուգել զգրուեալ ազգ մեր: Կեցցէ ընտիր Քահանայապետն մեր եւ Նաւապետն բարի առ ի հասուցանել զգինուորեալ Եկեղեցիս իւր ի նաւահանգիստն յաւիտենական երջանկութեան. ամէն:**

ԳԵՌԳԵ Ա. ՔԱՀ. Տ. ՍԱԲԳՍԵԱՆՑ.

ՅԱԽԱՆՅԵԱՅԷ.

ԽԶՄԻՐՆԷԱՆ ԱՐԱՐԱՏ ԿԵՅԳԷ.

Թեմական վերադասութիւն միջնակարգ եւ ծխական Դպրոցաց վիճակին Հայոց Վրաստանի եւ Իմէրէթի Ազնուամեծար Պ. Յակովբ Տէր Յովհաննէսեանցն պաշտօնական գրութեամբ ի 44-ն ամսոյս, ընդ համարաւ 67, առաջարկած էր որպէս Հոգաբարձութեանս, նոյնպէս եւ իւր օգնական Պ. Մովսէս Սամուէլեանցին՝ Վեհափառ Կաթողիկոսի Օծման տասներորդ տարեդարձի մասին ազատել ուսումից աշակերտաց եւ աշակերտութեաց Ախայցիսոյ բոլոր Հայոց ուսումնարանաց՝ ժողովել զնոսա եւ տանել Եկեղեցի՝ Ս. Պատարագին բոլոր ուսուցչաց հետ ի միասին. իսկ պատարագէն ետք՝ վերադառնալ կրկին ուսումնարան, եւ բացատրել նոցա այն օրուայ հանդիսի նշանակութիւնը: Եւ ահա, այս առթիւ, մեր եւս որպէս անդամ «**Նոր — արշալոյս**» վարժարանի հոգաբարձութեան՝ ի դիմաց աշակերտութեաց՝ յօրինած էինք մի ներբող. զոր եւ ընթերցաւ ուսումնարանի մէջ առաջի հանդիսականաց՝ առաջին աշակերտութի Դշխուհի Տէր Գրիգորեանցն. ներբողէն ետք՝ հիմնադիրն «**Նոր արշալոյս**» Մեծապատիւ Պ. Ռաֆայէլ Սաղաթիլեանց՝ սկսաւ բացատրել աշակերտութեաց Վեհափառ Կաթողիկոսի ազգասիրական գործերը, եւ ներբողի մէջ պարունակուած խորհրդաւոր մտքերն մեկնել. որոյ ամեն մէկ տողերէն պարզօրէն կնկատուի մեր սրտի անկեղծ զգացմունքներն եւ դիտողութիւնը՝ Վեհափառ Կաթողիկոսի ազգասիրական եւ ուսումնասիրական վսեմ գործոց վրայ հիմնաւորուած. բայց այս հանդէսէն յառաջ՝ այս ինքն նախ բան Եկեղեցի գնալն, Տեսչի օգնական վերոյիշեալ Պ. Սամուէլեանցն՝ որովհետեւ դիտէր որ չէր կարօղ ներկայ լինել մեր հանդիսին՝ Կարապետեան եւ Եղիսարեթեան ուսումնարաններու վերայ հսկողութիւն անկուն պատճառաւ, ուստի՝ ազգու եղանակաւ մը եւ ոճով՝ սկսաւ հրաւեր մը կարդալ աշակերտութեաց՝ հանդիսաւոր անկու Վեհափառ Օծման տասներորդ տարեդարձն:

ԵԴԻՇԷ ՎԱՐԺԱՊԵՏ ՄԵՍԱՏՈՒՆԵԱՆՑ.

ԱՆՏԱՆԱՍԻԿ յԻշատակեալ ուղերձը: